


Գրիգոր Խանջյան

ՀԽՍՀ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, ՀԽՍՀ, ԽՍՀՄ պետական մրցանակակիր, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի անդամ, Հայաստանի ԳԱ ակադեմիկոս, ՌԴ գեղարվեստի ակադեմիայի պատվավոր անդամ: Ծնվել է 1926թ. Երևանում: Սովորել է Փանոս Թերլեմեզյանի դպրոցում, այնուհետև՝ Երևանի գեղարվեստական ինստիտուտում:



1951թ. մտել է ստեղծագործական ասպարեզ: Գեղանկարչության ժանրում հանդես է եկել թեմատիկ կտավներով՝ «Սևանի ձկնորսները» (1956թ.), «Երևանի կառուցողները» (1960թ.) և այլն, բնանկարներով՝ «Գառնի» (1962թ.) և այլն, ինչպես նաև՝ դիմանկարներով ու նատյուրմորտներով: Նրա ստեղծագործությանը բնորոշ է նաև գրաֆիկան, մանավանդ՝ գրքային: Այդպիսիք են Հովհ. Թումանյանի «Լոռեցի Սաքո» (1956թ.), Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» (1958թ.), Գ. Էմինի «Բալլադ ձկնորսի մասին» (1970թ.), «Սասունցիների պարը» (1975թ.), Պարույր Սևակի «Անլուելի զանգակատուն» (1963-1965թթ.) գրքերի նկարազարդումները:

Գր. Խանջյանի ստեղծագործությունն ընդգրկում է նաև գորելենային արվեստը (գորգանկարչություն), փայտարվեստը, որմնանկարչությունը: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի պատվերով ստեղծել է «Իջման տեսիլք» (1977թ.), «Հայոց այբուբեն» (1981թ.), «Վարդանանք» (1983թ.), «Վերածնված Հայաստան (1994թ.) մեծամասշտաբ և բազմաֆիգուր գորելենները: Ստեղծել է ազգային կահ-կարասիք, քանդակազարդ դռներ ու փայտակերտ այլ իրեր՝ ի թիվս որոնց Սբ. Հռիփսիմե տաճարի վանատան ընդունելության սրահի և Փիթսբուրգի (ԱՄՆ) համալսարանի հայկական ընթերցասրահի կահավորանքը, Դերթոյթում (ԱՄՆ) Ալեք Մանուկյանի թանգարանի գեղազարդ դռները, Սբ. Էջմիածնի Մայր տաճարի և Նոր վեհարանի համար պատրաստված աթոռները և այլն: Վախճանվել է 2000թ. Երևանում: